# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հացիկ համայնք, 16 փողոց, 1շենք, 093 08 08 48
hacikiguxapetaran@inbox.ru

«03» դեկտեմբերի 2018 թվականի N 244

ՀՀ Արմավիրի մարզպետ
պարոն Հ. Մաթևոսյանին

Հարգարժան պարոն մարզպետ.

Համաձայն 17.03.2009թ. թիվ 600 գրության Ձեզ է ներկայացվում 2018 թվականի նեյեմբեր ամսին Հացիկ համայնքի ղեկավարի կողմից արձակված կարգադրությունները և ընդունված որոշումները:

Նշված ժամանակահատվածում արձակվել է 8 որոշում , կարգադրություն չի արձակվել:

Առդիր 11 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ Ֆ. Վարդանյան

03.12.2018թ.
գ. Հացիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հացիկ համայնք, 16 փողոց, 1շենք, 098 08 08 48
hacikiguxapetaran@inbox.ru

«26» նոյեմբերի 2018 թվականի

# ՈՐՈՇՈՒՄ N 78

## ՆԵՐԲՆԱԿԱՎԱՅՐԱՅԻՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՍՑԵԻ ՎԵՐԱՆՎԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային և (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2006 թվականի հուլիսի 3-ի «Համայնքային նշանակության փողոցների վերանվանման մասին» N7 որոշումը

**Որոշում եմ**

1. Արմավիրի մարզի Հացիկ համայնքի բնակելի կառուցապատման 0.0459 հա հողամասին (ծածկագիր 04-058-029-018) տալ հասցե Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հացիկ համայնքի 16-րդ փողոց 19/1:
2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Արմավիրի տարածքային ստորաբաժանում՝ պետական գրանցման համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ Ֆ. Վարդանյան

գ. Հացիկ 26.11.2018թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հացիկ համայնք, 16 փողոց, 1շենք, 093 08 08 48
hacikiguxapetaran@inbox.ru

«23» նոյեմբերի 2018 թվականի

# ՈՐՈՇՈՒՄ N 77

## ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀԱՍՑԵԻ ՎԵՐԱՆՎԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային և (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2006 թվականի հուլիսի 3-ի N7 որոշումը

**Որոշում եմ**

1. Արմավիրի մարզի Հացիկ համայնքի բնակիչ Ծառնիկ Մանուկյանին (ծնված 16.03.1952թ.) պատկանող բնակելի տանը՝ (ծածկագիր 04-058-033-006-014-017) տալ հասցե Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հացիկ համայնքի 2-րդ փողոց 25 շենք 17 բնակարան:
2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Արմավիրի տարածքային ստորաբաժանում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ Ֆ. Վարդանյան

գ. Հացիկ 23.11.2018թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հացիկ համայնք, 16 փողոց, 1շենք, 093 08 08 48
hacikiguxapetaran@inbox.ru

«20» նոյեմբերի 2018 թվականի

# ՈՐՈՇՈՒՄ N 76

## ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀԱՍՑԵԻ ՎԵՐԱՆՎԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային և (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2006 թվականի հուլիսի 3-ի N7 որոշումը

**Որոշում եմ**

1. Արմավիրի մարզի Հացիկ համայնքի բնակչուհի Գյուլփերի Էլոյանին (ծնված 16.10.1941թ.) պատկանող բնակելի տանը՝ (ծածկագիր 04-058-048-004) տալ հասցե Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հացիկ համայնքի 17-րդ փողոց 1 փակուղի 5 շենք թիվ 1:
2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Արմավիրի տարածքային ստորաբաժանում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

գ. Հացիկ 20.10.2018թ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հացիկ համայնք, 16 փողոց, 1շենք, 093 08 08 48
hacikiguxapetaran@inbox.ru

«20» նոյեմբերի 2018 թվականի

## ՈՐՈՇՈՒՄ N 75

## ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆՎԱԾ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՏԱՆ ԵՎ ՇԵՆՔ – ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՅՈՒԼՓԵՐԻ ԷԼՈՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արմավիրի մարզի Հացիկ համայնքի բնակիչ Գյուլփերի էլոյանը դիմել է Արմավիրի մարզ գյուղ Հացիկ, 17-րդ փողոց 1-ին փակուղի 5 շենք 1 հասցեում գտնվող օրինական տնամերձ հողամասի վրա կառուցված բնակելի տան և շենք-շինությունների նկատմամբ իրավունքների վերականգնելու խնդրանքով, որը օրենքի ուժով կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով:

Հաշվի առնելով, որ բնակելի տունը և օժանդակ շինությունները կառուցվել են մինչև 15.05.2001թ., հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, չի խախտում այլ անձանց իրավունքները, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-ն որոշման կարգով սահմանված և սույն որոշման 22-րդ կետի 1-ին ենթակետերով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով. հիմք ընդունելով Գյուլփերի էլոյանի դիմումը

### Որոշում եմ

1. Վերականգնել Արմավիրի մարզի Հացիկ գյուղի 17-րդ փողոց 1-ին փակուղի 5 շենք թիվ 1 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ քաղաքացի Գյուլփերի էլոյանի (ծնված 16.10.1941 թվականին) իրավունքը՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը 0.22 հա օրինական տնամերձ հողամասի վրա գտնվող թիվ 1 բնակելի տան՝ 1-4 տարածքի 31.60 քառ.մ (կառուցված 1966թ.) և 5-7 տարածքի՝ 47.6 քառ. մ (կառուցված 1933 թ.), ծածկի՝ 1.8 քառ. մ (կառուցված 2000 թ.), 2 ավտոտնակի՝ 24.4 քառ.մ (կառուցված 1982թ.), 3 մառանի՝ 18.5 քառ.մ (կառուցված 1966թ.) և 4 օժանդակ շինության՝ 5.5 քառ.մ (կառուցված 1966թ.) նկատմամբ:

2. 048-004 ծածկագրով 0.22հա հողամասին կից 0.044հա ավել տարածքը, որը չի գերազանցում տնամերձ հողամասի 20%-ը (ընդհանուրը կազմում է 0.264 հա), չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, սեփականության իրավունքով հատկացնել անհատույց Գյուլփերի էլոյանին:
3. Առաջարկել ՀՀ ԿԱ Ա.Գ.Կ.Պ.Կ. համապատասխան տարածքային ստորաբաժանմանը գրանցել քաղաքացի Գյուլփերի էլոյանի (ծնված 16.10.1941 թվականին) իրավունքը՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի տան և շենք- շինությունների նկատմամբ և տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. Եղիազարյան

գ. Հացիկ

20.11.2018թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հացիկ համայնք, 16 փողոց, 1շենք, 093 08 08 48
hacikiguxapetaran@inbox.ru

«06» նոյեմբերի 2018 թվականի

# ՈՐՈՇՈՒՄ N 74

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով

**Որոշում եմ**

1. ՀՀ Արմավիրի մարզպետարանից անհատույց ստացված 11.2 կգ «Բռոդիֆակում 0.25%» տեսակի մկնասպան միջոցը հողասեփականատերերին բաշխելու նպատակով ստեղծել հանձնաժողով համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովին 10 օրյա ժամկետում կազմակերպել և իրականացնել «Բռոդիֆակում 0.25%» տեսակի մկնասպան միջոցի բաշխումը Հացիկ գյուղի հողասեփականատերերին մկնանման կրծողների դեմ պայքարի միջոցառումներ կատարելու նպատակով:
3. «Բռոդիֆակում 0.25%» տեսակի մկնասպան միջոցի բաշխման ընթացքում հողասեփականատերերին ծանոթացնել անվտանգության կանոններին: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. Եղիազարյան

Գ. Հացիկ 06.11.2018թ.

ՀԱՎԵԼՎԱԾ N1
ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
2018Թ.ՆՈՅԵՄԲԵՐԻ 06-Ի N74 ՈՐՈՇՄԱՆ

ԿԱԶՄ

ՀՀ Արմավիրի մարզպետարանից անհատույց ստացված 11.2 կգ «Բռոդիֆակում 0.25%» տեսակի մկնասպան միջոցը Հացիկ համայնքի հողասեփականատերերին բաշխման հանձնաժողովի

Հանձնաժողովի անդամներ՝

Համայնքի ղեկավար՝ Ա. Եղիազարյան

ավագանու անդամներ՝ Պ. Մարտիրոսյան

Ս. Կարապետյան

առաջատար մասնագետ Ա. Ասատրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հացիկ համայնք, 16 փողոց, 1շենք, 093 08 08 48
hacikiguxapetaran@inbox.ru

# ՈՐՈՇՈՒՄ N 73-Ա

«05» նոյեմբերի 2018 թվականի

## ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 1 մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 1 կետով

**Որոշում եմ**

1. 2018 թվականի դեկտեմբերի 9-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների անցկացման համար սահմանել մեկ ընտրական տեղամաս:
2. Տեղամասային կենտրոնը սահմանել Հացիկ գյուղի միջնակարգ դպրոցի շենքում՝ 1-ին փողոց շենք 26 հասցեում:
3. Տեղամասի պատասխանատու նշանակել դպրոցի տնօրեն Տաթևիկ Մկրտչյանին:
4. Սույն որոշման օրինակն ուղարկել Կենտրոնական Ընտրական Հանձնաժողով:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. Եղիազարյան

գ. Հացիկ
05.11.2018թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հացիկ համայնք, 16 փողոց, 1շենք, 093 08 08 48
hacikiguxapetaran@inbox.ru

# ՈՐՈՇՈՒՄ N 72-Ա

«05» նոյեմբերի 2018 թվականի

## ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՆՎՃԱՐ ԴԱՀԼԻՃՆԵՐ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 3 մասով, 2018 թվականի դեկտեմբերի 9-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի արտահերթ ընտրություններին նախընտրական ժողովներ, թեկնածուների հետ, ընտրողների հետ հանդիպումներ և ընտրությունների հետ կապված այլ միջոցառումներ կազմակերպելու նպատակով

**Որոշում եմ**

1. Սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել անվճար դահլիճ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. Եղիազարյան

գ. Հացիկ
05.11.2018թ.

*Հավելված*
*Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի*
*Հացիկ համայնքի ղեկավարի 2018 թվականի*
*նոյեմբերի 5-ի թիվ 72-Ա որոշման*

# ՑԱՆԿ

## 2018 թվականի դեկտեմբերի 9-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի արտահերթ ընտրություններին մասնակցող կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին անվճար հիմունքներով տրամադրվող դահլիճների

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հացիկ համայնք

| Հ/հ | Դահլիճի, շինության անվանումը | Գտնվելու վայրը (հասցեն) | Նստատեղերի թիվը | Տրամադրելու օրերը և ժամերը | Դահլիճը, շինությունը տնօրինող | Այլ նշումներ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Հացիկի միջնակարգ դպրոցի դահլիճ | Գ. Հացիկ 1 փողոց 26 շենք | 128 | Աշխատանքային օրերին ժամը $18^{00}$-ից հետո, նաև շաբաթ և կիրակի օրերին | Տ. Մկրտչյան | Համայնքում այլ դահլիճ չլինելու պատճառով |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հացիկ համայնք, 16 փողոց, 1շենք, 093 08 08 48
hacikiguxapetaran@inbox.ru

# ՈՐՈՇՈՒՄ N 71-Ա

«05» նոյեմբերի 2018 թվականի

## ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌՆԵՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՎՃԱՐ ՏԵՂԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 21-րդ հոդվածի 3-րդ մասով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով՝

**Որոշում եմ**

1. 2018 թվականի դեկտեմբերի 9-ին կայանալիք ՀՀ Ազգային ժողովի արտահերթ ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) քարոզչական պաստառները փակցնելու համար Հացիկ համայնքի տարածքում առանձնացնել անվճար տեղեր հետևյալ հասցեներում՝
   - ա.16 փողոց 4-րդ նրբանցք 2-րդ շենք՝ 10 քառ. մ
   - բ. 16 փողոց 48-րդ շենք՝ 5քառ.մ
   - գ. 3 փողոց 28-րդ շենք՝ 4 քառ.մ
2. Սույն որոշման օրինակն ուղարկել Կենտրոնական ընտրական հանձնաժողով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. Եղիազարյան

գ. Հացիկ
05.11.2018թ.